

10256

660

Пришларше

1909г

891.99
U-75

pg



Ա. ԳՐՔՈՅՑ

ԴԱՏԱՍՑՈՒՆ



ԳԻՆ Է Հ ՂՐՈՒՇ

Ա. ՊՈՂԻՆ

ՏՊԱԳՐՈՒԹԵԻՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ
Զարմարձելիք Յակոբիան խոն

1909

01 JAN 2009



891.39

Ա-75

սսօ

Դ ա խ ա ս ո ւ մ ն

(ՀՀ15)



10256
4. 9075

1909

15 FEB 2013

20.567

BOOK MAIL 10

436



ՅԱԿՈԲ Փ. ՕՏԵԱՆ

ԱՇՏԱՆ.ՀԱՄ ՀԱՅՐԻՆ!

Սնիփառունակ սիրմիդ վրայ, փոխան յուօտր-
ձանի, դնում եմ ք Էլ ցաւերից հիւսւած եւ զբր-
չովո կապած այս փնջիկը:

Ո Ր Դ ի դ.

Ա Ա Օ



4371/85

ԴԱՏԱՍՏԱՆ

Ա

Արաքսի ավին, Արցախի լեռների ստւերի տակին,
Փայտակարանի անտառածածածկ բարձրութիւնների հան-
դէպ, նստած Մ... աւանում ապրող Սարգիսինց տան
ճրագլ տակաւին վառւում էր, չնայելով նրան, որ կէս
գիշերը արդէն անց էր կացել:

Հաստաբուն, ճիւղաշատ և սաղարթախիտ թթենին
վրան էր կապել Սարգիսինց բակի վրայ: Նրա հովանու
տակ, թափանձիկ թիւլշղարշով ամփոփուած ճրագի
չուրջը, տնընէկ կապերտի երեսին ձգած փափլիկ տրմ-
փիկների վրայ շուրջանակի բոլորել-նստել էին, նորա-
հաս մի կին և երեք փոքրիկներ, որոնցից մեծը հազիւ
տառներկու, իսկ փոքրը միայն երեք տարեկան կը լի-
նէին. մի երիտասարդ տղամարդ անհանգիստ քայլ-
րով չափչփում էր բակը լայնքից ու երկայնքից:

Ամառնային գիշեր էր, լուռ և խաղաղ. միայն,
երբեմն երբեմն թեթև մի քամի վզզում էր թթենու
սաղարթախիտ կատարով և մեղմիկ տարուբերում էր
նրա կանանչ ու թաւշեայ տերեւները, որպէսզի օրօր
երգեն քնի և հանգստութեան գրկումը ննջած յոդնա-
տանջ մարդկութեան համար:

Քայլքլող երիտասարդը կարծես յոզնեց, նա մօտեցաւ փոքրիկներին, նատեց նրանց մօտ և թիկն տալով բարձին՝ ձգւեց մարմնի երկայնքով։ Փոքրիկները անոմիջապէս վրայ թափւեցին, մէկը ընկաւ կրծքի վրայ ու սկսեց խաղալ նրա ընչացքի հետ, երկրորդը ծընկը ներին նատեց, առաւ ձեռքը դրեց իւր թաթիկների մէջ, շփեց, չոյեց, ապա բառձրացնելով տաքուկ տաքուկ պաչեց, յետոյ իր թշին կպցնելով այնպէս երկար ժամանակ մնաց։ Երրորդը՝ ամենից մեծը հանդարդիկ մօտեցաւ նրա բարձին, տեղաւորւելով այնտեղ, համբուշեց նրա երեսները, թուշը՝ թշին հպած, քաղցրաւոր, արտամալի ձայնով շնչաց։

— Հայրիկ ջան, քեզ մատաղ, ինչու կերթաս, ախր գիշեր է, մենք մինակ կը մնանք, խեղճ ենք, մայրիկը կուլայ։ Վերջին խօսքերը արտասանելիս նա հարցական նայեածքով դարձաւ դէպի մայրը, որը ձեռքի կարը մի կողմ ձգած, գլուխը ծռած-յենած ձեռքին՝ մտամոլոր նայում էր ճրագին։ Լա՛ւ, որ երթաս շուտով կը վերադանաս, վերսկսեց աղջիկը, այնպիսի շեշտով որ թւում էր թէ խիստ կարեսը մի հանգամանք մոռացել է, և միայն դրա գրական պատասխանը պիտի գար իրեն գոհացնելու։

— Հայրիկ ջա՞ն, մի գնա, մի երթա, մեզ էլ տար, մենք էլ կը գանք, մայրիկն էլ կը բերենք, միասին կերթա՞նք, վրա տուին խօսքերի մի տարափ երկու փոքրիկները, ասես կարօտամաշ թռչունի ձագուկներ էին հաւաքւած, օտար երկրից վերադարձած իրենց հարազատի շուրջը ու ձլվլում էին։

Լուռ էր երիտասարդ հայրը, փոխանակ պատասխանի, որ չէր կարողանում, դժուարանում էր, նա անդադար համբուրում էր զաւակներին։

Չէր խօսում և կինը մի անօրինակ թախիծ դէմքին նկարած, անծայր մի մտածմուշք ճակատն ակօսելով հոսում էր հորդառատ, և աչքերը անհուն ծով, ծով զգացումների, նա մերթ երիտասարդին էր նայում, մերթ փոքրիկներին և երբեմնակի այրւող ճրագին։

Փոքրիկները անդադար կրկնում էին իրենց հարց ու պահանջները, սակայն հայրը լուռ էր, նա ճգնում էր պատասխանի տեղակ, փաղաքուշներով ու գուրգուրանքով բաւարարել, բայց այս նրան չյաջողւեց, և վերջապէս նա բերանը բեցեց։

— Հեռու չեմ երթար և շուտով կը վերադառնամ, սիրելիներ, պատասխանեց նա բռնազոսիկ կերպով։

— Զէ՛, չէ՛ մի՛ գնա, մի՛ գնա հայրիկ, ջան, մենք մինակ կը մնանք։

— Մայրիկը ձեզ մօտ է, ինչու մենակ կը մնաք։ Հեղինէ, ասաց, նա դառնալով դէպի կինը, որը իր ամուսինն էր, հերի՛ք է լուռ կենաս սիրելիս, որանց հանգստացրու և տար թող քնեն, ապա կրկն դառնալով զաւակներին շարունակեց, ելէ՛ք սիրունիկներս, ելէ՛ք քնելու զնացէք, արդէն շա՛տ ուշ է, քնի բարձոն եկել է ու նստել ձեր թերթերունքների վրայ, եթէ մի քիչ էլ ուշանաք, նա կը մտնի աչքերնիդ, ու կը ննջէ այնտեղերում։

— Հանգստացնե՛լ, բայց ինչպէ՞ս, միթէ դա կը առաւո՞ր է, — սրաի խորքերից և նրա նրբին լարերի վրա

հնչող աղու մի ձայնով, մրմնջաց կինը մեկուսի : Հայրը գնում, շարունակեց նա, բայց ո՛չ չ գնում այլ փախում է, դեռ այս բաւական չէ, նա պահանջում է, որ իր զաւակները, հարազաները հանգիստ լինեն : Նա պահանջում է անկարելին, անբնականը : Քարունականը աշխարհ, անիրաւ, անօրէն կարգեր, զայրագին հոգոց հանելով, վերջացնելով իր խոսքերը, վեր կացաւ, բռնեց փոքրիկների ձեռները և համոզելով նրանց որ հայրիկը էլ չի գնալու, այս գիշերն էլ կը մնայ, տարւ քնացնելու :

Երիտասարդը դարձեալ ոտքի ելաւ ու սկսեց ըստ առաջնոյն քալել, նա յաճախ երկնքին էր նայում աստղերի ուղղութեանը և այդպիսով հաշւելով ժամանակը և գտնելով շատ ուշացած փսփսում էր ինքնիրեն :

— Բայց ինչո՞ւ ուշանում են, ուր մնացին, զի՞նի փորձանքի հանդիպեցի :

Մւր էր գնում նա, և ինչպէս կինը ասաց ինչո՞ւ էր փախում, բաժանւում ամսւնուց, թողնում զաւակները :

Ահա՝ թէ ինչո՞ւ :

Գողթանի Մ . . . աւանը, ներկայացնում էր մէկը այն վայրերից, որ մեր այս չարաբաստիկ երկրի վրայ, ամէն տեղ, բոլոր սահմաններում, երկնակամարի հանուր տարածութեան ներքոյ, իր նմանները ունի, աւելի կամ պակաս, այսաեղ էլ, հարիւրաւոր ընտանիքներ, առանց սեռի ու հասակի խտրութեան, չուրջ տարին բոլոր, առանց եղանակի ու ժամանակի նըկատառութեան, աշխատում, բանում ու գործում էին,

մինչդեռ մի քանիսը, բազմայարկ ու գեղեցկաշէն ալ-ներում բնակողները, ընդհակառակն իսկի չէին աշխատում, այլ հրամայում ու կարգադրում էին առաջիններին, ուտում, խմում և վայելում նրանց տշխատան-քը, իսկ միւնիները, գետնափոր խուղիկներում բնակւողները, միշտ անօթի էին, սովորահի ենթակայ, կիսամերից, և իսպառ զրկւած աշխարհի մարդկացին վայելք-ներից : Այսպէս էր վիճակը . Ասումածը այդպէս էր տը-նօրինել ու սահմանել, ասում էին բաղդաւոր վայելողները : Դարեր շարունակ գոյութիւն ունեցող օրէնքները եկել հաստատել էին, կառավարութիւնները պահել պաշտպանել և, մինչեւ անգամ եկեղեցին, իր սուրբ հայրերով եկել էր օրհնել, սրբագրոծել մէկի լացը՝ պայմանաւորւած միւսի ծաղրով, շատերի քաղցր՝ մի քանիսի լշտութեամբ : Է՛լ ո՛վ ինչ պիտի անէր, ինչ կարող էր անել, ասում էին, բաղդէ, ճակատագիր է, պիտի հապանդել :

Սարգսեանց Փարօն—այսպէս էր անունը երիտասարդ հօրը, գիւղական վարժարանի տարրական դասընթացքը աւարտելուց յետոյ, բաղադրի մի յաջող կատակով ընկել էր միջնակարգ մի դպրոց : Այստեղ նա շատ բան սովորեց, շատ զրքեր ու պարբերական հրատարակութիւններ կարդաց, Դպրոցական ընթացքը աւարտելուց մի տարի առաջ, հազիւ քաննամեայ Փորօն, մասնաւորապէս հրապուրւեց ու յափշտակւեց այն ուսմունք-վարդապետութիւնով, սիրեց այն գիտութիւնը, որն ուսուցանում էր և ճամբայ ցոյց տալիս թէ ինչպէս պիտի անել, որ պատերազմները դադարին ու յաւիտեանս

տեղի չունենան, որ մարդկիկ իրար չզրկեն ու իրար միա չուտեն և արիւնը ջրի տեղ չգործածեն, որ քաղածածները կշտանան, և վերջապէս թշւառութիւնը և խտրականութիւնները վերանան և սրանց վոխարէն թագաւորէ եղբայրական, մարդկային խաղաղ և երջառնիկ կեանք: Այս ուսումունքը կոչում էր Սոցիալիզմ-ընկերվարութիւն, և նա սովորեց: Նա կարդաց «Հնչակ» թերթում և Հնչակեան ծրագրի մէջ ու յաճախ աղաւութեամբ լսեց այս գաղափարի առաքեալների բերանից փրկարար քարոզը: Փարօն հասկցաւ և նւիրեց իրեն այդ նպատակի իրագործմանը, նա ուխտեց զինուոր դառնալ Հնչակեան դրօշի, և վերջ տողորւած համամարդկային բարձր սկզբունքներով, նա հայրենի գիւղ վերագրածաւ, կամաց կամաց գործի սկսեց, յանձն առաւ գիւղական ուսուցչի համեստ և չարքաշ պաշտօն, և այս վերջնոյս միջոցով նա հայթայթում էր իւր և իրայինների ապրուստը:

Բայց այս երկար ժամանակ չտեսեց. նոր գաղափարները դիւր չեկան այլոց քրտինքով մնանողներին, նըրամնք նկատեցին ինչ որ փոփսութիւն, անցանկալի դարթնում իրենց ցայլ ատեն հաւատարիմ և հլու հրանալդ գիւղացիների մօտ, խուլ և թոյլ տրատւնչներ աեսան, զարհուրեցին ու կատառելով կառտվարութեան օգնութիւն, սուրբ հայրերի միջնորդութիւն և կրօնիդժոխիքի սպառնալիք աջակցութիւնը ինդրեցին երջառնիկ վայելողները, և միւս կողմից սպառնական թափով իրենց մասները շարժեցին, կազմեց երեսկ նիդա-

կակցութիւն և գործը սկսեց: Կառավարութիւնը վրձուեց բանդարկել նրան. եկեղեցու պետերը անէծք, բանադրամնք կարդացին, և Փարօն սրտի անհուն ցաւով թողեց սիրած կոչումը, անօրէն հալածանքներից խոյս տւեց ու դարձաւ փախստական...

Երկար ժամանակեայ բաժանումից յետոյ, այսօր նա եկել էր տեսնելու իր անօդ հարազատներին և վերջն մնաս բարեր ասելու, որովհետեւ այս անդամ շատ հեռու պիտի գնար և գուցէ անդարձ մի ճամբով,

Փոքրիկները արդէն քնել էին: Ամուսինները, Հեղինէն և Փարօն, թթենու տակին, աղօտախալ ճրագի մօտ, թեւերն իրար ուսերին ձգած, գլուխ գլխի խօսակցում էին, երբեմն երբեմն իրենց զրոյցները տաքուկ ու կարօտակէղ համբոյրներով քաղցրացնում: Իրար սիրող, ջերմ, անկեղծ սրտով կապւած երկու մարդ, զաւակների հայր, երիտասարդ ամուսիններ, անողոք, անխիղճ հալածանքներից ստիպւած էին իրար թողնել, հեռանալ և գուցէ մինչև յաւիտեան:

— Դարձեալ զնում եմ, ասաց Փարօն, առնական բայց սրտմալի մի ձայնով, և այս անդամ շատ հեռո՞ւ, Արաքսից էն կողմ, էն բարձր ու ձիւնոտ Մասիս սարերի էն միւս կողմը, արիւն է հոսում. գետերը հեղեղւել արիւն են տանում. լնդարձակ դաշտերն կարմիր են ներկւել, սարերն ու ձորեր, հովիտ, անտառներ վարդագոյն զգեստ են հագել, տանջաստան աղէտավայրի մեր հարազատների արտասունքներից ծովեր են կազմեել, նրանց ողն ու լացը սարերն ու քարերն են մռմռացնում..., անէծք ու նզովք կարդա և սովորեց-

բու մեր որդիներին որ ատեն, ամենասաստիկ կերպով
ատեն արիւն թափողը՝ մարդկային, Նեղայների
արիւնը :

— Դու, Փարօ ջան, ընդմիջեց Հեղինէն լայմցուկ
շեշտով, դու պահանջում ես արդիւկ զաւակներիդ,
ատելի դարձնել նրանց ա'յն ինչ որ դու որդեգրել ես.
բայց ինչո՞ւ այդպէս, եթէ վատ է՝ այդ դու էլ մի արա,
թո՞ղ զէնք ու զրահը . . .

— Ես էլ ատում էի և չեմ դատարել բուռն ուժով,
բոլոր զգացումներովս և բանականութեամբս ատելուց,
բայց ինչ արած, վայ, հազար վայ ու նախատինք չա-
րասիրտ ձրիակերներին ու այլակերներին, որոնք պատ-
ճառ դառձան: Նրանք մեր խաղաղ խօսքի, մարդանէր
քարոզի դէմ թնդանօթների անեղ բերաններ բաց արին,
մեր գրիչների դէմ սայրասուր և հատու սրեր, սպի-
տակ թղթի դէմ՝ արեան ու պատերազմի դաշտեր ցու-
ցուցին, և ելան կստորել մի ամբողջ ժողովուրդ, քա-
րուքանդ անել մի ամբողջ չէն աշխարհ: Ինքնապաշտ-
պանութեան վէն ձայնը հնչեց բարձրածայն, և մենք
հարկադրւեցանք զէնք այդ մահու գործիքը գործա-
ծել, այո՞ մեղք-յանցանքը մերը չէ, ամօթ պատճառին:

Հնչակ . . . խաղաղ գիշերւան, հանդարտիկ օդի ծալ-
քերից յստակ ու սուր մի ձայն, մարդկային մի կանչ
հնչեց հեռւից, Մերոնք են—ասաց Փարօն:

Երկու սրտեր, երկու կրծքերի տախտակների տակ
ուժկին բարախել սկսեցին, լեզուները կարկամեցին:
Բաժանման վայրկեան էր, անխօս գրկախտառնեցին

նբանք, արցաւնքները իրար խառնեցին և լեզուների
պատմել արտայայտել չկարողացածը, տաքուկ կաթիւ-
ները իրար ականջին փսփացին:

Հնչակ . . . կրկնեց նշանաձայնը և լեռներ ու ձու-
րեր անթիւ լեզուներով արձագանքեցին:

— Հեղինէ՛, բաւական է, շատ եմ ուշանում, զէն-
քերս բեր, ինքնիրեն բունազրոսիկ, զսպած ասաց Փարօն:

Եւ Հեղինէն բերեց, փամփշտակալները խաչիակ
ձգեց նրա ուսերից, և փամփուշտների պապղուն փայ-
լով կուրծքը զարդարեց: Մէջքին կապեց դաշոյնն ու
ատրճանակը, փոքրիկ պարկը լի հաց-պաշարով, և թի-
թեղիայ ջրիմիկը կողքից կախեց և բոլորից յետոյ հը-
րացանը տւեց ձեռք, սուրբ և խորհրդաւոր հանդիսա-
ւորութեամբ հետեւիալ խօսքերն ասելով:

— Գնա՛ Փարօ ջան, գնա՛ և երբ կը սրբես ուրիշ
թաց աչքը, այն ժամանակ յիշիր Հեղինէ՛դ, գնա՛, բայց
խնդրում եմ իմ վերջին խօսքերով, որ քու զէնքերը
երբէք ի չար չգործածես, չդաւաճանես, և ինչքան
հսար է խնայես մարդկային կեանքին . . .

— Ես քու ցանկութիւնը սրբութեամբ կը կատարեմ—
պատախանեց Փարօն, և վերջին համբոյներ փոխա-
նակելուց յետոյ, նա բարձրացաւ բակի ցածլիկ սպատիցը,
թռաւ դուրս և արագութեամբ հեռացաւ: Մի քանի
վայրկեան անցկացած երրորդ անգամ լուեց Հնչակ,
որին Փարօի ծանօթ ձայնը նոյնպէս բարձրագոչ պատաս-
խանեց «Զանգակ» . . .

Զանգակ . . . Հնչակ, հնչում ու լուսում են գիշե-
րային խաւարի մէջ, լոյս, աղատութիւն սիրող հալա-

ծականների բերմից, բայց Ե՞րբ կը լինի որ Հնչակը ազա-
առութեան աւետիսը հնչէ ազատ, համարձակ և Զան-
դակը քաղցրաձայն զօղանջով մեռնող բռնութեան,
անհետ կորչով անհաւասարութեան մահերգը երգէ...
Էալահառաւչ շեշտով առեց Հեղինէն, որ թիկն էր տւել
հաստաբուն ծափին, ասես առկալ կարենալու, տանելու
համար ուսերին ծանրացած ահագին վշտարեռը:

Սրշալոյսը նորազարթ աչքերը բացեց, թերթերունք-
ներից քունը թօթւելով, բարձրաբերձր սարերի կանանչն
ու ծաղկունքը թրչող զովասուն յօղ-շաղով երեսը
լւաց, ապա սկսեց իր զուգ ու զարդարանքը, հորիզոնի
գրկից զուրս լիրեց զիշերը այնտեղ պահած, իր ճակտի
թագն ու պսակ ոսկեճածանչ արեգակը, դրեց իր զլիխն:
Հուր ու բաց բանեց ողջ շրջապատը, հազար հազար շո-
ղկի-ճառագյթները ամենուրէք թլթլացին, աղբիւր-
ների ու առաւակների ցուրտ գրկեր մտան առաւոտեան
լողանքի համար, ամենուրեք շաղ արւած ակներն ու
գոհարները երփներանգ աշխիներով ողջոյն ասացին:

Փոքրիկները տակաւին մոռշ-մոռշ ննջում էին, զրլ-
իկները ձգած, մազերն արձակած ու ցրիւ տրւած,
թաթիկները երեսներին: Մայրը նրանց զվասպերե, թի-
կըն տւած բարձին, գլուխը քարշ արած, կիսահակ
նիրնում էր որպէս հաւերժական հարս: Սրշալոյսի շո-
ղերն իտաղուինդումով այստեղ էլ իջան, փոքրիկները
գլուխնին փախցրին, թաթիկներով ծածկեցին աչքերը:
Զարթնեց իսկուհին, նստելով անկողնու մէջ շուրջը նա-
յեց կիսաքուն, տեսաւ մօրը մինակ, իսկ հայրը չկար:

— Մայրիկ ջան, մայրիկ, ասս ինձ շուտով, ո՞ւր է
հայրիկը, մի՞թէ նա գնաց...

Կիսաքուն, երազող, նիրհած մայրը խուփ արած աշ-
քերը բաց արաւ, նայեց զաւակին, լոիկ ու մնջիկ.
աչքերի աղբրակների ակունքը բացեց, արցունքի մար-
դարտէ կալակները փայլեցին նրանց յատակ ու անհուն
յատակում, ապա նա մեղմիկ ձայնով ասաց:

— Հայրդ գնաց, այս' գնաց, իմ սիրուն բալիկ:

Մի պահ տիրեց խորհին, տրտմալի և խօսքերով
անարտայայտելի թախիծը՝ մայր և աղջիկ իրար նայե-
ցին անխօս և աչքերով ինչ որ մաքեր ու ոյզեր փո-
խանակեցին:

Զիւնապատ սարերի կուտական կատարներից ծնած,
կանանկ անտառների և ծաղկալի հովիտների միջով ան-
ցած, առաւօտեան թարմ զեփիւռը սրսփալով եկաւ,
սուրաց, սւաց և սօսափեց թթենու տերեները: Զե-
փիւռ-հովիկի թշուշ մրմունջին խառնեց և արշալոյ-
սեան թաչունների մեղեղինները, այդ ժամանակ երգեց
և մայրը, նրա քաղցրահնչիւն գաշնակը միացուց բնու-
թեան համերգին, ասես թէ կամենում էր և խնդրում,
որ օդասլաց զեփիւռը տանէ իւր երզը և այն հնչեցնէ,
սարերի գլխին, ժոյն քարի տակ, գլուխը քարեայ քար-
ձին դրած, հրացանը կրծքին գրկած իր սիրելի Փարոին,
նրա ականջին մրմնջան, օրօր ասեն նրա համար:

Ցանուն նոր կեանի տանջուղ մարդկութեան

Զինուր դարձաւ նա ուխտին Հնչակեան.

Մէկը՝ ամենին, ամենի՝ մէկին

Վեհ սկզբունքին միւս հաւատարին:

Սուրբ զաղափարի դրօք ձեռիին

Նա գնաց օգնել հէք տաշւածներին,

Եւ ազատութեան աննաց ծարսուվ
Մարտի դաւ նետեց նա բռու խանդալ:
Մեղքը մերը չէ, նախաթիմք երանց,
Որք եղան պատճառ այս գաման շարեաց:
Վայ երանց զլիին, մօս է փրկութեան
Օրը պանծալի, վախճան բռնութեան:
Մի վերջին հարւած, դու' ու տանջուղ մարդիկ,
Սուրբ աշխատանքի հարազա որդիկ,
Եւ խարխուլ ժենքը անարզ բռնութեան
Հիմնուինին հարքանդ կրթինի անպայման:
Մի՛ ուժեղ զարկ էլ, եւ՝ դրօս յաղթապան
Հնչակիեան ուխտի վեն գաղափարաց,
Նուն նոր կեանքի, հաւասարութեան
Կը բերէ համբաւ մեր ԱԶԱՏՈՒԹԵԱՆ....:



(115)

4311-85

Բ.

Մեծ դէպք անունով որակւոծ համատարած պատուհաս աղէտից, որ ընդհանուր և հասկանալի կոչումով աշխարհին յայտնի է և չայկական կոտորածներ բացորոշ յասուուկ անուամբ. այդ մեծ դէպքից հազիւմէկ, մէկուկէս տարի էր անցել, բայց տակաւին, խանձւած և քարուքանդ աւերակների վրայ ջարդ ու փշուր ընկած ժողովուրդը, վիրաւոր, յուսակտուր և անօգնական ողբում էր և պատմում անտարքեր և անսիրտ մարդկութեան. թէ՛ ինչպէս ինքն էլ ցանկացաւ մարդու պէս ապրել, իր բռնաբարւած իրաւունքների վերադարձնելը պահանջել, և թէ՛ իր այս համեստ և մարդկային իղձերին ի՞նչպէս պատասխանեցին . . . : Զարդուկոտոր ժողովուրդը նստած, աւերակների մոխիրներն էր փորփում, կայծեր գտնելու համար, ողբում էր լալտդին ձայնով իր վիշտը, վիշտակների տակ թաղւած նահատակներին լսելի դարձնելու փափաքով :

Ծովակի ափին, կանաչապատ լեռներով հովանաւորւած ժայռ բերդը, զերթ հսկայական և յաւիտենական պաշտպան, մի կողքում առած, նստած էր Վ. . . քաղաքը : Նա, բնական զեղեցկութեամբ աննման չքնաղագոյն քաղաքը, կրծքին ստայցած անբուժելի և լայնաբերան վէրքերի կոկիճներից, ստայցած այրւածքների հոգեհան մոմուռից, այնքան էր աղաղակել, այնպէս էր կանչել, որ այժմ ձայնը իսպառ կտրած, անծպուտ և ուշակորոյս ընկել միայն միսնում էր :



Մարդիկ քիչ էր մնում հաւատային՝ թէ ըմբոստութեան ոգին յաւիտեանս վերացել է, երբ նորից խորհրդաւոր մի շնուկ բերնէ բերան շրջել :

— Ելի եկել են, փափսում էին իրար ականջին բնաւեր քաղաքացիները, բայց այնպիսի զգուշութեամբ և ախուվախով, որ թւում էր թէ այդ մասին խօսելիս բերաննին և լեզուն այրւում ու տապակում է :

Զրոյցներ էին շրջում, չափաղանցուած, առասպեկտախառն : Ոմանք ոգեսորւում էին և ուրախութեամբ լցում, մի մասը լուրջ մտահոգութեամբ տարւում, իսկ փոքրամասնութիւնը դժգոհ էր ու կատաղած : Այսպիսի հոսանքներ դյութիւն ունէին հարազատ ժողովրդի ծոցում, մինչ տիրապետող տարրը հազար աչքերով և ականջներով հետեւում էր նորոյթին, զանազան միջոցներ, արտակարգ պայմաններ և խատութիւններ ստեղծելով :

Քաղաքի հրապարակներից մէկում, ուր գալիս միանում էին երեք փողոցների բերանները, մի յորդահոս աղբիւրի գլխին, սուերաշատ ուռենու համելի շւաքի տակ, աղբիւրի կողքին դրած աթոռների վրայ նստատել էին մի խումբ մարդիկ . հովանում և հանգստանում էին :

— Գիտե՞ս, լսե՞լ ես, Յակոբ ախպէր, էլի՛ եկել են... ինչպէս չեն վախենում, չեն խնայում իրենց երիտասարդութեան : Զարմանալի բան է նրանց մատիորձ անվտանգ այստեղ համփլը, կտրել և անց են կացել ութ տաս օրերի ճամբա, սարերի կատարներով են քալեր, գիշերները ցերեկ դարձրած, ձեղքել են ու անցել արնախում վայրենիների անեղ բաղմութիւններ, զինուորական խիտ շրդթաններ : Ճիշտն ասած՝ այս մարդիկ քաջ և անձուէր լինե-

լուց զատ, մի ուրիշ լաւ բան էլ ունին, գերբնական մի բան, որ թերեւս մեր գլխում չի տեղաւորւիլ :

Խօսողը անդադար աչքերը չորս բոլոր դարձնելով վերջացրեց խօսքը և սպասողական դրութեան մէջ մնաց դիմացինի պատասխանին :

— Բայց ո՞վքեր են այդ եկուորները, Միսակ ախպէր, որոնց մասին այդքան բաներ ասացիր, հարցրեց առաջինը, որը ոյժ էր գործ դնում իրեն անդիտակ ձեւացընելու համար :

— Միթէ՛ դու այդքան անտեղեակ ես, վրաքերեց Միսակը, նրանք են էլի,

— Էլի՛ նրանք, բայց ո՞վքեր են

— Նրանք էլի... մեր տղերք... Հնչակեանները... հատ հատ և շեշտելով ասաց Միսակը, միշտ շուրջը նայելով, և ապա երբ վերջացրեց յաջողութեամբ, այսինքն առանց լրտեսւելու, կարծես մի մեծ բեռն ցած դրեց իր ուսերից : Յետոյ նա վեր կացաւ, աղբիւրի ջրով մի լաւ զովացրեց երեսն ու ձեռները, սրբւեց ու չորացրեց և, նախկին տեղը բանելով շարունակեց .

— Նրանք Պարսկաստանի սահմաններով են անցել և այստեղ հասել . խումբը բաղկացած է աւելի քան վաթսուն հոգուց . սրանց մեծամասնութիւնը այն կողմեր ապաստանած մեր փախստականներից են, իսկ մի փոքր մասը՝ էն կողմի մեր ախպէրներից են, ասում են, չատ և ընտիր զինք ու մթերք են բերել :

— Փա՛ռք քեզ տէր, հօ՛ չմեռաւ կոխւը, հօ՛ չլուց արդարութեան ձայնը, վասերը այսպէս կսպասէին, և ինձ, նահատակ զաւակների դժբախտ հօր սիրաը խոցում խո-

ցնացնում էին ամեն անդամ , ասելով թէ «ի՞ զուր մեռան գնացին երիտասարդ զաւակներդ , նրանց ճամբան շարունակող էլ չի լինի , նրանց ոյժը մի ձգելու վասօդէր , ևն ևն» . այժմ թո՛ղ տեսնեն : Ես գիտէի , Միասկ ախաղէր , բայց դիտմամբ չդիտնալու զարկի , պիտի շա՞տ զդոց լինել , լրտեսներ էլի շատցեր են : Յակորը տակաւին չէր վերջացրել , երբ նրանց մօտեցաւ երբորդ մի անձնաւորութիւն և ասաց .

— Բարեկամներ պատրաստէք , դարձեալ զուրումը կծինց մեր գուռու՞ց սարացած աղէտը պիտի ծանրանայ մեր վրայ , և այս անդամ անդարձ և անյոյս պիտի կորչինք :

— Ի՞նչո՞ւ , ի՞նչ կայ որ , միաձայն վրայ բերին առաջին երկուսը :

— Ի՞նչ հանգիստ և անվրդով էլ հարցնում էք , ուշ րե՛մն ոչնչից լուր չունիք էլի՛ , դէ՛ լսէք որ այդպէս է , չնչասպատ և կիսայանդիման տօնով շարունակեց նորեկը : «Ե՞ն անաքանդի տղերք էլի՛ եկել են , կարծէ՛ք բաւական չեղաւ ի՞նչ չարիքների որ առիթ դարձան , այժմ էլ եկել են պակասը լրացնելու : Տօ՛ , մի մարդ չկայ դրանց առէ : «Անխե՛լք տաքղուխներ , ի՞նչ կուզէք , ձեր ձեռքից ի՞նչ կրգայ , եթէ մեզ չէք խղճայ , գոնէ ձեր կանաչ արեւներին խնայէք :

— Լա՛ւ , լա՛ւ , ախաղէր , կարձ կապիր , ընդմիջեց Յակորը , նրանք իրենց գործը լաւ գիտեն և մեր խելքով չեն պար գայ : Հապա ի՞նչ կուզէիր . կը ցանկայիր ցկեանս նստիլ այս աւերակների վրայ և միայն սգալ , կամ բըռնաւորների սոքը լիզել , որդուդ , հարազատներիդ կեանքի թել կարող ձեռները համբուրել :

— Հապա' ի՞նչ անենք , «մի ձեռք որ կարել չի լինի , պիտի համբուրես ու գլխիդ դնես» , ի՞նչ կարող ենք անել , խղճալի և կարեկցութիւն ու արգահատանք շարժող ձայնով պատասխանեց խօսակիցը : Դնանք ո՞ր անտակ ծովս ընկնինք , ի՞նչ ու կապինք : Քիչ առաջ կպուավարութիւնը պահանջեց առաջնորդարանից և բոլոր թաղապետներից , որ պահած յեղափոխականներին իրեն յանձնեն , հակառակ դէպքում նա սպառնում է քաղաքավարի կերպով , թէ գալիքների դէմ առնել , պատասխանաւու լինել չեմ կարող :

— Այսպիսի բաններ տակաւին շատ պիտի տեսնենք , եկող գնացող խմբերին վերջ , կորուներին վախճան այն ժամանակ միայն կը հասնի , երբ նորերը դուրս կը գան կատարեալ յաղթութեամբ , պատասխանեց Յակորը :

— Ուրեմն դարձեալ Մհծ-աղէտների նախօրեակումն ենք ապրում , շնչացին մնացեալ երկուսը :

— Այս' , դժբաղդաբար , որովհետեւ Վամպիրը տակաւին չի կշտացել :

Այս վերջին խօսքերի հետ միաժամանակ լսելի եղաւ զինորական շեփորի զիլ և անախորժ ձայնը . նա հնչեց երկար և բոլոր զօրապահականոցներից արձագանդ առաւ : Փողը զօրքերին ի զէն էր կանչում և յայտարարում պաշարողական դրութիւն :

Փաղաքացիները դոզացին :

Զինորաշարժը սկանեց :

Խուզարկում էին :

Տներից դուրս , հրապարակներում և փողոցներում , շուկաներում և խանութներում եղած բոլոր այր հայ

մարդիկ պաշարւեցին իրենց կեցած տեղերումը։ Տեղից ժամ գալը անկարելի էր, շարժւովը գնդակահար կը լինէր։

Իսկ աներում կանայք . . . զաւակներ . . . ողբ ու վայնասան, երկիր կամարներ թնդացնող ձայներով . . .

Խողարկում էին . . . Գիտէ՞ք ի՞նչ բան է այս տեսի՞ւ էք . . .

Եւ այս դրութիւնը տեւեց ժամեր . . . քաղաքի բոլոր հայրնակ թաղերում . . . բայց տակաւին անհետեւանք. յեղափականներին գտնել - չէին կարողանում։

Յանկարծ լսելի եղան հրացանի մի քանի ձայթիւններ։ Հեծեալ եւ հետիուն զինւորների մեծ խմբը, յայնի պետերից առաջնորդւած, դիմոցին գէպի այն կողմը, ուսկից լսեց հրացանազարկը։

Մատնանշւած էր լրտեսի կողմից յեղափականների պարագլիի թագստոցը, և մեծ բազմութեամբ խուզարկուներ հաւաքւած այդ տան շուրջը, ուժեղ կերպով մի քանի տակ շղթայել էին նրան և սպասում էին հրամանատարի գալստեան ու կարգադրութեան, երբ զինւորներից մէկը պատուհանում նկատելով օտարականի զգեստով կեցած մի մարդու, հրացան էր արձակել և որին հետևել էին իր ընկերները։

Մինչ դրսում միջոցներ էին որոնում տունը գրաւելու և բնակողներին ձերբակալելու, մինչ հարիւրաւոր հրազնների բերանները պատրաստ էին կրակ տեղալու տանը վրայ, և միւս կողմից լեփ-լեցուն տակառով նախթն էր սպասում հրդեհ ձգելու, ներսում կատարում էր հետևեալը, պարզւում էր այսպիսի տեսարան։

Յեղափոխական խմբի առաջնորդը, շուրջն առած երեք չորս ընկերները ու հիւրասիրող տան երիտասարդ զաւակները, զէն 'ի ձեռին պատրաստում էին կռւել դիմադրելու . նրանք ծրագրում էին դիմադրութեան կերպը, դիրքերը ևն . : Տիրում էր կատարեալ ոգևորութիւն։ Շըւարումի, վախի ուեէ մի աննշան արտայայտութիւն չէին կրում դէմքերը, «մեռնինք մէկտեղ, ապրինք մէկտեղ» խօսքերը ամենքի շրթների վրայ կը թլթար։

— «Ման ընկերով հարանիք է», ժողովրդական սա փիլսոփայական դարձւածք առւածքով մէջ մտաւ տան տիրուհին։ Համակրելի արտաքինով և դիւրեկան ձայնով մի կին էր նա, փորձւած և այսպիսի անցքերի յաճախակի ականատես եղած։ — Բայց չպէտք է մունալ որ ամեն մահը մահ չէ, ամեն մահ՝ անմահութիւն չէ, ամեն մեռնիլը, քաջութիւն, անձնւիրութիւն չէ։ Կան կեանքեր, ապրող, չմահացող կեանքեր՝ որոնց առաջ ինք՝ ամենասարսափելի ման անգամ ոչնչանում է, երբեմն ապլելու զոհարերութիւնը գերիվեր է ամենաստեսակ ողջակէզներից։ Զաւակներս, ներկայ դէպքում ես գտնում եմ, որ ձեզ աւելի հեշտ է մահն ընդառաջ գնալ, քան կեանքին, և երկրորդ՝ ամենաստոյդ կերպով ձեր մահից առաջ եղած ընդդիմադրութիւնը կը հրահրէ սկառող հրդեհը և ձեզ հետ, մեղ հետ, ամերոջ քաղաքը անափոփ թշւառութեան կը մատնէ։

— Ուրեմն դո՞ւ, մայրիկ ջան, առաջարկում ես անձնատուր լինել և այն էլ զէն 'ի ձեռին, ընդմիջեց նրան երիտասարդ զաւակներից Արմենակը։

Երիտասարդ խմբակեալը ուշադրութեամբ լսում էր

տիկնոջը և մերթ ընդմերթ զնողով աչքերով նպառում էր դուրս, հետեւում թշնամու գործողութիւններին,

— Ընկե՛ր, ասաց խմբապետը, մերոնց արդէն ձեր-
բակալեցին ու տարան. ես տեսայ Մելքոնին, Աւոյն և
Վարդանին իրենց տաճնեալներով, անզէն և կիսամերկ:
Այս ի՞նչ բան է, ըստ երեւոյթին մենք հետապնդուած
ենք դաւաճանների վարպետ աչքերից: Ապա' խօսքը
տիկնոջ ուղղելով ասաց նրան, — Մայրիկ, մենք հրա-
պարակ ենք եկել հանրութեան համար, ժողովրդի հա-
մար, եթէ նրա շահը կը պահանջէ մեղնից ապրել ու
տանջւել թրքական բանտերում, պատրաստ ենք կա-
տարելու:

Սյսպիսի խօսակցութիւն տեղի կունենար ներսում,
երբ յանկարծ հրացանների համազարկը ճռուաց և մի
խումբ ոստիկաններ ու զօրքեր սուսերամերկ և լիքը հր-
բացաններով ու ատրճանակներով, զանազան կողմերից
ներս խուժելով, անկարելի դարձրին այն տեղ եղողների
ու է շարժումը



Գ.

Ամիսներ էին անցկացել, նոյն իսկ տարին լրացաւ և
տակաւին ո՛չ մի դատավարութիւն տեղի ունեցաւ:

Կամաւորների, խմբապետի եւ նրանց հետ բանտար-
կւած հարիւրաւոր, դործին անտեղեակ գիւղացի և քա-
ղաքացի հայերի կացութեան, տանջանքների և չարչա-
րանքների մասին մէկը միւսից սարսափելի այնպիսի բա-
ներ էին պատմում, որ լսողները ականջները գոցելով,
անիծելով և հառաչելով փախչում էին:

Վերջապէս եկաւ, հասաւ դատավարութեան օրը:

Օգոստոսի առաջին օրն էր, տաք և պայծառ:

Դատարանում այնքան իփտ էր մարդկացին բազմու-
թիւնը, որ առանց այն էլ տօթազին օդը անշնչելի էր
դարձել: Զօրքերի ու ոստիկանները հաղիւ էին պահպա-
նում կարգը: Մեղադրեալներին, որոնք մի քանի տասն-
եակ երիտասարդներ էին, առաւօտ վաղ, հասարակու-
թիւնը հաւաքւելուց առաջ տրդէն փոխաղբել էին բան-
տից և փակել դատաստանատան ներքնայարկ, գետնա-
փոր նկուղներում: Երբ ներկայ էր դատաւորների կազմը
և մօտ սկսելու ժամը, նրանց բերին դաշիճը, տեղաւո-
րեցին դատաւողների յատուկ բաժնում և շրջապատեցին
պահակներով . . .

Դահլիճի ճակատ պատի վրայ, ուկեգոյն շրջանակի
մէջ, կախւած էր տէրունական խորհրդանշանը, որի աչ-
քերի առաջ, ոսմերի տակ դրւած ամբիոնի վրայ, կիսա-
լուսածեւ և կանոչածածկ սեղանի շուրջը բազմել էր

դատաստանական կազմը : Մէջտեղումը նստել էր նախագահը, յիսուն տարի քալած, ալեխառն միրուքով, բարի արտաքին երեւոյթով մի ծերունի՝ կրօնաւորի տարագով : Նրա գլխարկի շուրջ բոլորած սպիտակ փաթթոցի փայլը աւել էր լուսաւորում ճակատն ու դէմքը և սպիտակացնում ալեղարդուած հերերը : Նախագահի կողքերին, աջ ու ձախ, տեղ էին բռնել աղքերի եւ դասային ներկայացուցիչները . աջակողմի վերջին աթոռը գրաւել էր դատախազը, նրա դիմացում, միւս կողքի վերջին տեղը տըրւած էր աւագ քարտուղարին : Դատախազի արտաքինը անդամ արգիլում էր նայողին՝ դէպի նա, զզւանքի ու ատելութեան զգացումներից բացի, մի այլ մտածում ունենալ :

Նախագահը դատը սկսւած յայտարարեց :

Բազմամարդ դահլիճը որ աղմկած էր յարդ, լոեց այնպէս, ինչպէս ու գիշերների մէջ գերեզմանատներն են լուսում :

Քարտուղարը սկսեց ընթերցումը մեղադրեալների վերաբերեալ ամբողջ գործի, որի մէջ առաջ էին բերւած նախնական քննութեան ժամանակ, քննիչների կողմից կազմած բոլոր արտառոց յերիւրանքները : Այս վերջանալուց յետոյ, կարդացին մեղադրեալների անունները, որոնք տասնեակիներով էին :

Նախագահը դիմելով մեղադրեալներին հարցնում է, — բոլորը ներկայ են : Հնչակեան ներկայացուցիչ Փարօն, ո՞վ է, թող առաջ անցնի :

Այս ժամանակ հասարակութեան մէջ տիրեց մի իրարանցում, որովհետեւ առէնքն էլ ցանկանում էին սպատճառ տեսնել հոչակաւոր ներկայացուցին :

Երիտասարդը առաջացաւ և ասեց — ահա՛ ես :

— Ո՞վ էք դուք, որտեղացի, ի՞նչպէս է ձեր անուն ազգանունը, հարցրեց քաղցրութեամբ նախագահը :

— Ես դժբաղտաբար ո՛չ մի բան չեմ կարող ասել . Պ. նախագահ, որով հետեւ ո՛չ մի երաշխիք չունիմ անձիս անձեռնմխելութեան, մինչև անգամ դատավարութեան ընթացքում, ուստի ես առաջարկում եմ կանչել այլ տէրութեանց ներկայացուցիչներին ներկայ լինելու համար, հակառակ դէպքում ես հրաժարւում եմ ձեր բոլոր հարցերին պատասխանելուց :

Նախագահը այնուհետեւ հերթով հարցրեց ներկայացուցիչ բոլոր ընկերներին, որոնք դարձեալ միեւնոյն կերպով պատասխանեցին : Ապա նա դատաւորներին խորհրդակցութեան հրաւիրեց :

Անցկացաւ կէս ժամ, որից յետոյ նախագահը մտաւ դահլիճ և յայտարարեց թէ նիստը յետաձգւում է :

Այսպէս ամիսներ տեւեց դատաւորութիւնը,

Վերջապէս եկաւ, հասաւ վերջնական գործողութիւնը,

Դատավարութեան ներկայ էին այլ պետութեանց ներկայացուցիչներն և ահագին բազմութիւն այլազան ժողովրդներից : Ընդունւած պաշտօնական արարողութիւնները վերջանալուց յետոյ, դատախազը սկսեց կարդալ իր մեղադրականը :

«Արդարադատութեան եմ յանձնում Հնչակեան ներկայացուցիչ Փարօնին, խմբապեաներ՝ Մելքոնին, Վարդանին, Արշակին և իրենց հետեւորդ այս բազմաթիւ ընկերներին, որոնք զինւած խմբով օտար երկիրների սահ-

մաններից գաղտնի մեր երկիրը մտան, կռւի բռնւեցին Բ. Փ. շրջանի Խ... գիւղի մօտ, Քրդերի և մեր կռառվարութեան զինուորների հետ, միօրեայ ճակատամարտից յետոյ նրանք յաջողեցան խուսափիլ և քաղաք մտնել, ուր հնչպէո յայսնի է չնորհիւ կռառվարութնան եռանդուն ջանքերի վերջապէս ձերբակալւեցին: Նախնական քննութիւնների և բազմոթիւ վկայութիւնների վրայ հիմնելով ապացուցեց, որ նրանք անդամներ են հնչակեան յանցաւոր և գաղտնի ընկերութեան, որը նպատակ ունի, ամենից առաջ, անջատել Հայաստանը թիւրքական կայսրութիւնից և հիմնել Հայոց թագաւորութիւն: Երկրորդ՝ իրմաց ծրագրով պահանջում են ջնջել բոլոր աստւածադիր կարգերը, օրէնքները, որմնցով մինչև այսօր կռառվարում են աշխարհը ու մեր հայրախնամ կայսեր երկիրն ու հպատակները, և նրանց տեղ դնել հաւասարութեան, ազատութեան և այլն կարգերը, որ ժամանակ կնոջ և տղամարդու խարութիւններն, տէր ու ծառան, զինուորն ու փաշան բոլորը պիտի վերանան և իրրե թէ տմինքը հաւասար պիտի լինին: Այս յանցաւոր և աշխարհակործան, հակուկրօն և ամաստւած նպատակները իրագործելու համար, նրանք ընարել են նոյնպէս ամենալատապորտելի միջոցներ: Զինուած խմբեր կաղմակերպելով դուրս են եկել լեռները, կողոպտում և թալանում են բարի և աստւածապաշտ մարդկանց, սպաննում են մեծ թագաւորի պաշտօննեաններին, աւերում, հրդեհում և խոռվում են մեր խաղաղ երկիրը: Այս ամենը արդէն ապացուցւած իրութիւններ են, ուստի պահանջում եմ, պարոնայք դատաւորներ, յանուն արդարադատութեան և օրինագրքի,

սրանց, որպէս պետական դաւաճանների, նորին կայսերական մեծութեան դէմ ըմբոստացողների, որպէս ոճրագործների և աւազակների, դատել և պատժել համաձայն պատժական օրինագրքի 45, 56, 58 և 62րդ յօդւածների արամադբութեանց . . .»:

Դատախազը վերջացրեց, հանդիսատես հասարակութեան մըջից լսում էին հայնոյախառն կանչւռտուքներ. «Մա՞ս անաստուածներին», «կախաղանով խեղդամահ ամել այդ չարագործ ապստամբներին»:

Դարերի մոլեռանդութեան, խաւարամտութեան ձայնն էր այս, որ զի հնչում էր վայրենի հասկացողութիւններով մնաւծ ու զարգացած ժողովրդի բերնով:

— Այժմ հերթը ձերն է Պ. Պ. մեղադրեալներ. խօսեք ու պաշտպանեցէք ձեզ, երբէք մի թաքցրէք ձշմարտութիւնը, համարձակութեամբ խոստովանէք և հաւատացէք, յուսացէք արդարադատութեամը: Առաջնոր նահրաւիրեց ատեան ներկայացուցին:

Ոտքի ելաւ Փարօն, մի երկու քայլ առաջ գնաց հազարտ համովիսաւորութեամբ, հրաբորսով աչքերով չորս բոլորը նայեց, ապա հայեացքը սեեռեց ուղիղ նախագահին, մինչ ուսերն իջնող գանգուր մազերը հեռացրեց ճակատից և քունքերից, սրբեց քրաինքը, ապա համարձակ և հնչիւն ձայնով սկսեց:

— «Պարոնայք դատաւորներ, համոզւած լինելով որ մեր դաւանած սկզբունքները ձգտում են մարդկութեան կատարեալ երջանկութիւն հաստատելու և ապահովնելու, գիտակցելով մեր գաղափարների և գործի անվիճելի վեհութեանը, ես միանգամայն երբէք կարիք չեմ զգում

մեզ պաշտպանելու և կամ այսպէս անւանւած արդարացնելու, որովհետեւ թէ առաջնը և թէ մանաւանդ երկրորդը ոչ մի նշանակութիւն չունին մեզ համար : Ես իմ ճառով պիտի պատասխանեմ միայն Պ. դատախազին և նրա մեր կուսակցութեան հասցէին արած զգւելի զըրպարտութիւններին : Արդարադատութիւնը արդէն գոյութիւն չունի, որովհետեւ ա՛յն ինչ որ ճշմարիտ է և մարդկային, նա ձեր օրինագրքով նկատած է ծանր յանցանք : Գոյութիւն ունի և մի այլ նշանաւոր համգամանք, ներկայում նոյնիսկ գործածութիւնից հանւած է և այդ օրինագիրք կոչւածը, նրա պատիժները չառ մեղմ են նկատւած, թագաւորում է բռնապետ, անսիրտ տիրապետողների բացարձակ կամքը, այնպէս որ ես հաւատացած եմ, որ մեր վճռագիրները արդէն արւած են ձեզ և այժմ նրանք դրւած են այդ սեղանի վրայ, հետեւաբար դուք ոչինչ անել չեք կարող, բացի հասարակ մարդխարուկ ձեւական խաղից :

«Այն դժբաղդ օրից, երբոր մեր երկրագնդի վրայ սկիզբն առին, ներկայումս իրենց ծայրայեղութեան և ամենաքիրտ սաստկութեան հասած իրաւակարգերն ու հասկացողութիւնները, որոնք ստեղծւեցին բռնադատօրէն, հասաւատեցին տիրելու, հպատակեցնելու, զրկելու և առանց աշխատանքի ուտել վայելելու դրութիւնը, որոնք, բնասուր բոլոր բարիքների հետ և մարդկութեան ամենաածնչող մեծամասնութեանը ստիպեցին զինու բիրտ և անսպանիւ ոյժով, միայն և լոկ իրենց սին փառքին, անբարոյական համոյքներին ծառայել: Երանք իր թէ աղնիւն ու վեհը պաշտել առաջ, մարդկանց բարոյացնելու և ձղիւ-

մութիւնից բարձրացնելու պատրւակով, վարդապետութիւններ անգամ յօրինեցին, յարմարեցրին և իրենց ցանկութեան դէնք, միջոց դարձրին ստոր դիտումները իրագործելու համար . մի խօսքով՝ նրանց համար գոյութիւն ունի մարդկային աղդի մեծամասնութիւնը իբրեւ լոկ միջոց, աստիճան կամ պատւանդան յդիմանալու և տիրելու համար : Ահա այսպէս եղաւ որ երկիրը դարձաւ դժոխք, արեան ծով, թշւառութեան հովիտ . . . որպէս զի տէրերը թագակիրները և իրենց արբանեակները զւարձանան ի հայիւ այլոց, անհամար աշխատաւորների, միլիոնաւոր բանսորների . . . : Եւ այն դժբաղդ օրից, երբ այս կարգերի հիմը դրւեց, սկսւեց միաժամանակ մի խուլ, յարատեւ եւ յամառ կուր տէրերի և հպատակների միջեւ : Դարեր եկան ու անցան : Պատերազմներ եղան մէկ միւսից ահեղ : Մարդկային արիւնը գետերի նման հոսեց : Տանջւող մարդկութեան անպատմելի գալարումները ստիպեցին և պատճառ դարձան, որ մարդկային գլուխը, միտքը ձար գըտնէ, ճամբայ ցոյց տայ եւ վախճան դնէ այս աշխարհաւեր և մարդակոտոր չարեաց :

Եւ եղան մարդիկ, որոնք խորհեցին, մտածեցին և տարիներով յոգնեցին երկար, մինչև որ մեր օրերում գտան միջոցը, ճամբան, միակը, գիտնական և թւաբանական ճշմարտութիւնների վրայ ձեւած մի վարդապետութիւն, որ կոչում է Սացիալիզմ-ընկերվարութիւն : Ի՞նչ է ասում այդ դիտութիւնը : Նա յայտաբարում է, որ մարդկային թշւառութեան, պատերազմների և անհաւատաբութեանց միակ և հիմնական պատճառը անտեսական պայմաններն են, պայմանները որոնք ստեղծել են շահե-

բով և հետեւաբար ըմբռնումներով իրար հակառակ դասակարգեր, և որպէս դարման այս չարեաց, նաև դալիս է իր հրամայականը դնելու: Եւ ահա՛, — պիտի կործանւին դասակարգերը, դա սրամամական անհրաժեշտութիւն է: Եւ արդիւնաբերութեան միջոցները սեպհականութիւն դառնալով աշխատաւոր դասակարգին, առաջ կը գայ ընամանհրաժեշտօրէն հաւասար աշխատանք, հաւասար վայելք, որով և կը թագաւորէ «Մէկը ամէնքի, ամէնքը մէկի» սկզբունքը:

Ահա՛ այս է և Հնչակեան կուսակցութեան սկզբունքը, նրա միակ և վերջնական նախատակը:

Այս միջավայրի և ժամանակի մէջ Հնչակեան կուսակցութեան ծնունդը բնական էր և հրամայական, և նա հրապարակ ելաւ գործելու: Ի՞նչ էին ներկայացնում գործունէութեան համար ընտրած ասպարէզը և իրեն ծնունդ տւող ժողովուրդը իրենք իրենցից:

Սմբողջ երկիրը անքում էր ամենասարսափելի բըռնապետութեան ճիրաններում. անտեսականը՝ ցեղերին ու ազգերին դարձրել էր գերի և իրար յօշուող, տիրապետողների ձեռամբ: Սուր կարիքը աշխարհով մէկ աղաղակում էր: Կրօնը՝ շահագործողների գլխաւոր դէնքերից մէկը, իր ախուր գերը շատ յաջողութեամբ էր կատարում: Տիրապետող-կառավարողների ազգային պաշտօնական կրօնը չէին դաւանում հավատակուած ժողովուրդները, և նրանք, չնորհիւ այս հանգստանքի էլ ենթակայ էին բացի դասակարգացին զրկանքներից, կոտորածների ու հաւածանքների իրենց դասակից ու բաղդակից, բայց տիրապետողների կրօն դաւանող, անդիտակից խարբւածների կողմից էլ:

Եւ իրեւ ագդ ու այլակրօն տարր՝ հալածւող ժողովուրդներից մէկն էլ հայութիւնն է, որից ծնունդ առեց մեր կուսակցութիւնը:

Դարեր շարունակ նա՝ հայութիւնը տանջւեց ու չարչարւեց. անտանելի բեռը շալակն առած՝ անհուն զրկանքներով այս օրերին հասաւ: Երբ դրութիւնը աւելի վատթարացաւ, ճնշումները սաստկացան և գերազանցելով պատմականները, բոլոր անցեալը մոռացնել տւին, այս հետեւանք եղաւ որ նա զարժնէ և զգայ տամնելիններորդ դարու բանապետների էն տիպիկ ներկայացուցիչ Մեծ-Մարդասպան Արդիւլ-Համբատի լծի ծանրութիւնը և ընդվզումի գաղափարը ծնէ:

Իր սահմաններից դուրս, իր դասակիցներից պարարւած՝ թագակիրը կատաղի գաղան կտրեց ներսինների, խրայինների հանդէպ: Ուաքի ելան դարերով քնածնները, ազատութեան հրդեհը բորբոքւեց, ապատամբութեան գոռ փողի ձայնը լայնատարած երկրի մէկ ծայրից միւսը լսելի եղաւ, ճնշւած շատ ժողովուրդներ թօթափեցին լուծը, փշեցին շղթանները և ազատ շունչ առին:

Ուսքի ելաւ և Հնչակեան կուսակցութիւնը յանձին հայ ժողովրդի և վճռեց կամ ապրել և պահել իր ազգային պատմա-անհատականութիւնը և կամ թէ մոռնել պատաւուոր կերպով, իրաւունքներ պաշտպանելու ճակատամարտում:

Մեղ մեղադրամ էք անջատողականութեան, Հայաստանը բաժնելու և այստեղ Հայկական թագաւորութիւն հիմնելու մէջ:

Մենք չե՞նք անջատողը, մենք չե՞նք բաժանողը, այլ

դուք, պարոնա՛յք դատաւորներ, դուք և ձեր կառավա-
դութիւնը։ Ամբողջ երկրը իշահ ձեզ դարձրել էք ըն-
դարձակ շահագործարան, միլիոնաւոր ձեզ նոման
մարդկանց ձեզ սարուկներ և ասում էք բանադա-
տում էք որ լոեն, խեղդում էք բողոքի անշան ձայն
անգամ։ Տանելի ո՛չնչ չկայ այս երկում։ ազգերի
գոյութեանը վտանգ է սպառնում։ Դուք ծրագրել էք
և եռանդով էլ դործադրում էք այդ ազգերի չնջումը։
Թոյլ չէք տալիս որ ապրին ազգերն ու ժողովուրդները,
և ապա՛ վեր էք ենում և մնջադրում որ բաժանում
են, անջատողականներ են։ Ստեղծէ՛ք երկում փոքր
ինչ տանելի կարգեր, թոյլ տուէք ազատ զարգանալու,
և ո՛չ ոք չի մտածիլ բաննել։ Իսկ դուք ի՞նչ արիք։
— Դէմ կեցաք ձեր բոլոր ուժով Միտհատեան սահմանադ-
րութեանն անգամ։ Սուլթան Համբդը թաղեց ո՛չ միայն
Միտհատն և իր սահմանադրութիւնը, այլ այսպէս մոտա-
ծողներին, կանկածելիներին հարիւրներով ու հազարնե-
րով կերակուր դարձրեց Միջերկրական, Սև և Մարմարա
ծովերի ձիներին։ Գնացէ՛ք հարցրէք մայրաքաղաքի բը-
նակիչներին, որոնք դադարեցին ձուկ ուտելուց, որովհե-
տեւ նրանք լեշանոտել էին։ Շրջէք երկրի բոլոր անկիւն-
ները և կը գտնէք անշուք գերեզմանները թիւրք ազա-
տամիաների՝ ձեզնից հալածւած, ձեր ձեռքով միւս աշ-
խարհ ուղարկւած։ Եւ ահա այս պատճաններն էին որ
բաժան բաժան դարձրին թիւրքիան, ու իրականացաւ
ներկայ արիւնուշտ գահակալի դժբախտ հօր գուշակու-
թիւնը, որն ինձ պատմել են բանտում թիւրք հայրենա-
կիցներս։ «Աբրիւլ Համբդի ծննդեան ժամանակ, հայրը

բաղնիքում լողանալիս, պալատական բանքերները աւե-
տում են նրա թագուհու երկունքից ազատւիլը, — Մանչ
է նորածինը, հարցնում է մերկամարմին Սուլթանը—
«ա՛յ» պատասխանում են։ Վայ, տրամադին հառաջում
է նա և ձեռները ծնկներին զարնում, խեղճ ժողովուրդ,
ափսոս իմ երկրին, ես մերկ, նորածինը՝ ազագայ կայս-
րացուն մերկ, այս լաւ զուգադիպութիւն, լաւ նշան չէ»—
և ձիշտ լաւ նշան չէր գաղանի աշխարհ գալը, մանա-
ւանդ թագաւոր դառնալը։ Շուրջերնիդ նայէք և տեսէք
աւերը, ջարդուղչուր եղած և Եւրոպական դրամատէրերի
գանձարան դարձած թիւրքիան, նրա ժողովուրդների
աղքատոթիւնն և քաղցածութիւննը։

Վերջին խօսքերը ելեքտրականացրին ամենքին էլ։
Դատախազը իր տեղում շարժւում է ինչպէս վշերի վրայ
նստած մէկը, ժողովրդի միջից ձայներ բարձրացան, ու
մանք կանչում են «Ճիշտ է, ճիշտ է ասում», ոմանք,
«Ուեցրէ՛ք գեաւուրին, հայնոյում է»։

— Պարոն նախագա'ն, պահանջում եմ լոեցնել, ու
րովհետեւ նա յանդգնում է հայնոյել մեր աստւածաշուք
կայսեր, ես թոյլ չեմ տալ և չեմ կարող հանդուրժել,
յուղւած և փրփրած կերպով ասաց դատախազը։

Մեղադրւողը դադար էր առել, նա քրտնել ու կար-
միկ էր, այնպէս էր ոգեւորւած որ իրեն զգում էր ա-
զատ քարոզչական ամբիոնի վրայ։ Եւ վերսկսեց նա։

— Ես չեմ հայնոյում, այլ ասում եմ զուտ ճշմարտու-
թիւն, եւ ձեզ ծանր է գալիս, դուք չէք կարողանում
լսել։ Ահա՛ այսպէս, պարոնա՛յք դատաւորներ, երկիրը
բաժան բաժան մնողները, անջատականները մենք չենք,
այլ դուք, տիրապետողներիդ կառավարութիւնը։

Մեզ մեղադրում էք, որ նպատակ ունինք հայկական թագաւորութիւնը վերականգնելու : Սա՛ սո՛ւտ է, բացարձակ և անխիղճ զրապարտութիւն է : Մենք Հայաստան, ինքնավար Հայաստան ենք ուղում այնտեղ բնակւող ժողովուրդների համար, ուր չեն տիրապետելու բռնապետական կարգեր, ուր ազգ ազգի և ցեղ ցեղի վրայ չեն տիրելու, ուր բացի ժողովրդական կամքից, գոյութիւն չի ունենալ և ո՛չ մի թագաւոր մնն ք չենք ցանկանում մէկ տիրողին տապալել և նրա տեղ մի այլը դնել : Խշորների անունները փոխելով ոչինչ չի լինի, մեզ համար միեւնոյնն է : Սուլթան Համբան էլ Թաղէոս արքան էլ, ուրեմն այն բանում, ինչում որ մեղ էք յանցաւ որ ճանաչում, կատարեալ վստահութեամբ ձեզ պիտի մեղադրել, որովհետեւ դուք էք պահպանողը բռնակալների և նրանց գարշապարները լիզողը :

Մեզ դատապարտում էք որպէս անաստածների և անկրօնների, բայց ո՞րն է ձեր Աստւածը, ի՞նչ է ձեր կրօնը : Դարձեր առաջ ապրող մարդկութեան համար պահանջ էր, անհրաժեշտութիւն էր կրօն ունենալ, աստւած ունենալ, և եթէ լինէր Աստւած, ինչպէս ասում է մի յացանի փիլիսոփայ՝ «մարդիկ պիտի ստեղծէին նրան :» Այն, ինչ որ մի ժամանակ պէտք էր, ներկայումս անպէտք է . այդպէս է և կրօնը : Նա՛ ներկայ մարդկութեան համար ո՞չ միայն պէտքական չէ, այլև վասակար է, որովհետեւ նա դարձել է ամենասուժեղ մի աղդակ տիրապետողների համար, նա քարոզում է ատելութիւն և աններողամշտութիւն տարբեր դաւանութիւն ունեցող մարդկանց հանդէպ, նա՛ օրնում է մարդակոտոր սուրը, սրբագոր-

ծում է մարդասպան օրէնքները : Մենք պահանջում ենք խղճի կատարեալ ազատութիւն, և որի համար էլ առաջդրում ենք եկեղեցին բաժնել պետութիւնից, որպէսզի այս վերջինը չըռնանայ մարդկանց հաւատալիքների վրայ, չնարկադրէ նրան տուրք տալ ու յարգել այն բանը, որը չի դաւանում, չի հաւատում : Այժմ սասցէ՛ք, ո՞վ է ձեր Աստւածը, ո՞րն է ձեր կրօնը : Ձեր Աստւածը զէնքն է և կրօնը ձեր ստամոքսը, և մենք, հավարտութեամբ կասեմ, պիտի տապալենք այդ Աստւածը, պիտի ջնջենք այդ կրօնը . դա՛ հրամայական է, դա՛ մարդկացին է :

Այս խօսքերը ասելիս հանդիսատես հասարակութեան միջից իրարանցման աղմուկ բարձրացաւ, շողալ սկսեց դաշոյնի կեռ և փայլուն սուրը, որի կրողը գոռում էր կատաղօրէն – ճամբա՛յ տէ՛ք, ճամբա՛ պիտի սրախողխող անել այդ անսատւածին : Զօրքերն ու ոստիկանները տեղներիցը դանդաղութեամբ էին շարժւում, և քիչ էր մնում որ մարդասպանը մեղադրեալին մօտենար, երբ օտար տէրութեանց ներկայացուցիչների հետեւորդ պահպանները մէջ մտան և շրջապատեցին նրան : Կաշուած չարամիտին հեռացրին դահլիճից . յուղումը դադարելուց յետոյ, պաշտպանողականը շարունակւեց :

– Ասում էք որ մենք դէմ ենք սեպհականատիրութեան . պստասիանեմ ու պարզեմ մեր տեսակէտը, որն ձեր կողմից ամենասամխիղճ կերպով խեղաթիւրուած է : Ասացէ՛ք, ինդրեմ, թէ ընդհանուր աշխարհում և թէ մեզանում ի՞նչպէս և ի՞նչո՞վ է ձեռք բերում սեպհականութիւնը, և ո՞վքեր են նորա տէրերն ու վայելողները : Դոյքը, ունեցւածքը, կալւածքը, ընդհանուր խօսքով, սեպ-

հականութիւնը արդիւնք է մարդկային աշխատանքի, մարդու, բանուոր մարդու բազկի չարաչար աշխատութեան, բայց ասացէ՛ք, այս միլիոնաւոր գործաւորներից քանի՞սն են տէրը իրենց արտադրածի, նրա քանի՞երրորդ մասն են ստանում: Պատասխանը այս հարցի մէկ է և բացարձակապէս պարզ, —ո՛չ մէկը տէր է իր քրանաթոր վաստակի, այլ նրան տալիս են այնքան, որ չմոռնի, որ ֆիզիքական գոյութիւնը պահպանի էլի աշխատելու, էլի հարստութիւն արտադրելու համար: Ուր է գնում սրանց ստեղծած հարստութիւնը, ո՞վքեր են յափշտակում ու խլում սրանց սեպհականութիւնը: — Դո՛ւք և աշխարհի ամէն կողմերում տարածուած ձեր դասակիցները, ձեր կառավարութիւնները: Մարդկութեան ամենաչնչն տոկոս կազմող չահագործողների անյատակ գրպաններն են կլանում միլիոնաւորների արտադրած հարստութիւնները, նրա՞նք են որ առանց աշխատանքի, առանց յոդնութեան և քրաինքի տէր են դառնում չքեղաշէն պայտարի, լայնատարած կալուածների, գործարանների, երկաթուղինների, չոգենաւերի ևն. ևն., և որ աւելի վատթարն է և ամենասարսափելին, դա՛, իրենց վայելք պատրաստող միլիոնաւոր մարդկանց կատարեալ ստրկացնելն է, սեպհականացնելն է: Ասացէ՛ք, ո՞վ է սեպհականացնում գիւղացու աշխատանքի արդիւնքը, մե՞նք կանացնում գիւղացու աշխատանքի արդիւնքը, մե՞նք թէ դուք, ո՞վ է յաւիտենական սովի և կարիքի ուրականներով տանջում ժողովուրդը, մե՞նք թէ ձեր կառականներով:

Մենք չենք ցանկանում, որ առանց աշխատանքի վայելք լինի. մե՞նք չենք կարող տանիլ, որ միլիոնաւորներ աշխատին, անտուն անտեղ մնան, սովա-

ման մեւնին, իսկ չաշխատողները ուտեն ու պարարտանան: Մենք աշխատում ենք՝ կործանել սեպհականատիրութեան այս աւազակային դրութիւնը, տիրապետողների անսարդարութեանց վերջ տալ և շահագործողների ստեղծած անհաւասարութիւններին՝ վախճան: Պիտի վերանայ, դա՛ պատմութեան հրամայականն է, որ ո՛չ մի բանի առաջ կանգ առնել չգիտէ, ներկայ հասկացողութեամբ գոյութիւն ունեցող մասնաւոր սեպհականութիւնը, այսինքն՝ օրինականացած ամենասատոր ձեռի կողոպուտը, և նրա տեղը պիտի գրաւէ աշխատանքի սուրբ թագաւորութիւնը, հաւասար Աւիատանի և հաւասար վայելի: Ահա՛ այս էական ինդիքը վճռելու, մարդանուեր իդէան իրագործելու համար է որ մենք ձեռք ենք մեխում աշխարհում եղած մեր բոլոր բաղդակից ընկերներին և ասում: «Բոլո՞ր երկրների ընչաղուրկներ միացէ՛ք»:

Մեզ մեղադրում էք, որ ծրագրած ենք ընտանիքը և նրա սովորութիւններն ու օրէնքները տապալելու: Ահա գարձեալ մի մեղանդրանք որ ո՛չ մի հիմք չունի, ահա՛ և մի աւելորդ ամբաստանութիւն: Բայց ասացէ՛ք, ինդրեմ, գոյութիւն չունեցող մի կազմ ինչպէս կարելի է քանդել, ինչու կուել նրա դէմ: Ներկայումս, տիրապետող այս իրաւակարգի մէջ, տնտեսական այս պայմանների ներքոյ կայ ընտանիք, մնացել է ընտաննեկան կազմակերպութիւնը: Ո՛չ չկայ նա, նրան ոչնչացրիք իր հիմքից, և այժմ ընտանիք անւան տակ երեւան է հանւած ստրկական, իրաւագուրկ մի հաւաքածոյ, ենթակայ վերից եկած օրէնքների, անպաշտպան՝ ամէն կողմից իրեն վրայ թափող հարւածների առաջ: Ուր է ընտանիքը, երբ մարդ-

կութեան ուղիղ կէսը՝ մարդ մայրը, այդ կազմի մի անդամը, իրաւագուրկ է, ստրուկ է, և բացի անտեսական բռնութիւնից, ենթակայ է և այր մարդու իշխանութեան։ Այժմ ասացէ՛ք, ո՞վ քանոդեց ընտանիքը։ Զեր օրէնքները, ձեզնից հովանաւորւած և պաշտպանուած արտօնեալ դասակարգերն են, որ ստեղծեցին մարդավաճառի, մարդավաճառի հակամարդկային դրութիւնը, բիւրաւոր կանաց փողոց շպրտեցիք, հասարակաց անբարոյացման տներ կառուցիք և, վերջապէս, մինչև այս օր էլ, դեռ վաղն էլ կաշխատէք յաւիտենական դարձնել կին մարդու սորկութիւնը, որպէս զի նրա՞ն գործածէք միմիայն ձեր գաղանական հաճոյքների համար։ Միջեռ մենք, մեր պաշտպանուած սկզբունքներով, ուզում ենք բառնալ այս չարիքը, պահանջում ենք իրաւունքների և պարտականութեանց հաւասարացում, որով մի միայն հնար պիտի լինի վերակազմել ընտանիքը, իսկական սիրոց և հաւասարութեան վրայ կառուցւած։

Եւ մենք վճռեցինք, մեր կեանքերի գնովը, զէնքի ուժով հարկադրելու ստիպել այս սարսափների հեղինակներին, որ խոնհարւին մարդկութեան գերազոյն շահերի առաջ։ Մեզ ստիպեցիք զէնք վերցնել և գործածել հակառակ մեր ցանկութեան։ Որովհետև դուք տանել չկարողաք մեր խօսքն ու քարոզը, դուք սարսափում էք խաղաղ աշխատանքից անգամ, ձեր անարդ գոյութեան հիմքն ու խարիսխը կոպիտ և բռի ոյժն է միմիայն։ Մենք զինաթափի կիննենք հէնց այն ըստէին, երբ դուք մեր ձայները չէք խեղուիլ թնթանօթների որոտումներով։ Մենք զինւեցինք ինքնապաշտպանութեան համար։ մարդաս-

պաների դէմ կռւելու ելանք համապատասխան գործիքներով, և հերոսական ջանքերով դիմագրաւում ենք պատճել ենք կանգնեցնում մեր մարդիններով կոտորածներ և ժողովրդասպան ոճիրներ կազմակերպողների դէմ։ Մեր զէնքերը երբէք չեն դաւաճանիլ, նրանք չեն բարձրացել և չպիտի բարձրանան այսուհետև էլ անմեղ մարդկանց վրայ։

Մեզ անւանում էք ոճրագործ, կողոպահիչ, խռովարար են. ևն։ Պատասխանում եմ։

— Մենք ոճրագործներ չենք, չենք եղել և չպիտի լինինք, ոճրագործը ձեր կառավարութիւնն է իր անհամար անգիտակից հետեւորդներով։ Գործը հրապարակի վրայ է, աշխարհի առաջ, ինքնին պերճախօս և անկարօտ ապացոյցի։ Հարիւր հազարաւոր՝ դեռ երէկ ջարդւածների արեան գոլորշին, տակաւին դէպի երկնակամարն է բարձրանում. և արեամբ ոռոգւած Հայաստանի, Կիլիկիայի և Փոքր-Հայքի լայնատարած դաշտերը տակաւին չեն ցամաքել։ Մի ընդարձակ երկիր իր լեռներով ու ձորերով, գետերով ու լճերով վարդագոյն է հագել։ Դուրս նայէք մի անգամ հէնց այս դահլիճի պատուհաններից, և կը տեսնէք կոտորածի և հրդեհի վկաները, —մի տարի առաջ կոտորածի և հրդեհի մասնւած քաղաքի, դեռ ծխացող և սեւ ներկւած շինութեանց մրոտած պատերը։

ո՞վ է տիրամում աշխատաւորների չարքաշ գործունէութեան արդիւնքին, ո՞վ է խլում նրա օրապահիկը. — այլակերների, ծրիակերների կառավարութիւնը անշուշտ, և ո՞չ մենք։ Ովքե՛ր են կազմակերպում պաշտօնական գողութիւններն ու յափշտակութիւնները՝ առուք, մաքս,

տասանորդ են . Են : Ո՞վ է պաշտպանում և քաջալերում աւազակներին ու կողոպտիչներին և նրանց աւարը եղբօր պէս հաւասար բաժին անում .— դո՛ւք , ձեր կառավարութիւնը : Դուք կազմակերպեցիք ժողովուրդների հրապարակյին անամօթ աւարառը և մե՛զ էք մեղադրում :

Ասում էք , որ մենք խոռվարաններ ենք և վրդովում ենք ձեր երկրի՝ անդորրութիւնը , և այս ասում էք այն ժամանակ , երբ երկիրը մատնւած է անծայրածիր անիշխանութեան , երբ աղգերը իրար վրայ են արշաւում , երբ աշխատող գութանաւորի երգի տեղ՝ հրացաններն են ճարճատում , երբ հնձւորի մանգաղի փոխարէն , որերը մարդկային կեանքի ուկի հասկերն են քաղում . . . :

Մենք ոչ թէ խոռվում ենք խաղաղութիւնը , այլ ձեր գործը . ձեզ արգելք ենք հանդիսանում , չենք թողնում որ հանգստութեամբ թաղէք ժողովուրդներն և իրենց տենչանքները :

Ես վերջացնելուց առաջ կը կնում եմ :

Դուք քանդում էք կրօնի տաճարները , սրբութեան խորաններն էք պղծում , դարերի սրբագործած աւանդութիւնները ոտնատակ տալիս , չէք ճանաչում ո՛չ մի Աստւած , քացի ձեր քուակի , կրքերի և ստամոքսի աստծուց , և մե՛զ էք մեղադրում որպէս անսատւածների :

Տիրանում էք ուրիշների աշխատութեան արդիւնքին , խլում , յափշտակում էք այլոց սեպհականութիւնները , կաշառում և անխիղճ կերպով հարստահարում էք և մեղադրում :

Սպանում և կոտորածներ էք սփուռում և մեղ յանցաւոր ճանաչում :

Անդարոյականութիւնն էք թագաւորեցնում , կնավաճառը օրինականացնում , այր մարդու գերիշխանութիւնը կնոջ վրայ յաւիտենակացնել էք աշխատում , և ապա մեզ ասում որ «ընտանիքը քանդում էք» :

Ես վերջացնում եմ :

Այս բոլորից յետոյ , ինչ կամննում էք , կամ ինչ որ հրամայուած է ձեզ , արէ՛ք : Մենք գիտակցութեամբ ընտրել ենք պարտականութեան այս վշտու բայց սիրելի ասպարէզը : Մենք համոզուած ենք մեր գործի և կոչումի վեհութեանը , և ձեզ չի յաջողւի երբէ՛ք և ո՛չ մի գնով կասեցնել մեր ընթացքը , կանգնեցնել գիտութեան առաջընթաց անիւրը : Մեր գաղափարները անմեռ են , գերեզմանները արգանդ , մեր շարքերից ընկած իւրաքանչիւր մէկի փոխարէն՝ հաղարներ կը կանգնեն , և այս հաստատուն հաւատով ես կոչում եմ հպարտութեամբ և ասում վերջին խօսքը . —

Անկցի՛ բռնապետութիւնը ,

Կորչի՛ տնտեսական անհաւասարութիւնը ,

Կորչի՛ մարդասապանութիւնը ,

Կեցցէ՛ Սօցիալիզմը ,

Կեցցէ՛ Հնչակեան կուսակցութիւնը :

Փարօն սրբեց ճակատի քրտինքը , մօտեցաւ յանցապարտների նստարանին և նստեց :

Հասարակութիւնը ցնցւում էր , մարդիկ կրկն իրարուսերի վրայ էին բարձրանում հերոսին տեսնելու , դիտելու համար :

Նախագահը շւարած , ինքնիրեն կորսնցած , գլխահակ մտորում էր : Դատախազը ներքին ուժեղ կուից

անհանգիստ աչքերով ուզում էր լափել Փարօխն։ Դա-
տաւորները ննջել էին իրենց թաւշապատ բազկաթուների
մէջ փլած։

Նախագահը վերցրեց անուանացուցակը կարդաց և
ապա ասաց։

— Խմբապետ Մելքոնը թող ատեան գայ։

Քսան, քսաներկու գարուններ հազիւ տեսած,
խարտեալ մազերով, վառվուն և ցոլուն աչքերով մի
երիտասարդ, ինքնավստահ և յոխորտ առաջ անցնելով
ասաց։

— Ես եմ խմբապետ Մելքոնը։

— Դու նոյնպէս մեղադրում ես յանցաւոր ընկե-
րակցութեան անդամակցելու և Փարօխ հրոսակախումբը
առաջնորդելու մէջ, պաշտպանիր քեզ։

— Ես պաշտպանւելու պէտք չունիմ, որովհետեւ ինձ
երբէ՛ք և ո՛չ մի բանում մեղաւոր չեմ գտնում։ Այո՛, ես
զինւոր եմ Հնչակեան կուսակցութեան և ընկեր Փարօխ։
աւելի ոչինչ ունիմ ասելիք։ Ինչ ուզում էք, արէ՛ք։

Այս վերջին խօսքերը ասելուց յետոյ նա յետ եկաւ
իր տեղը և առանց ո և է անհանգստութեան նստեց։

Այսուհետեւ նախագահը դիմեց յաջորդաբար միաց-
եալ մեղադրեալներին և բոլոր ձեւական գործողութիւն-
ները վերջացած համարելով, գասային և տղգային ներ-
կայացուցիչ ճանշյւած դատաւորներին հրաւիրեց Խորհր-
դակցութեան։

Դատաստանական դահլիճում կրկին աղմուկ բարձ-
րացաւ և, հետաքրքիրների բազմութիւնը, ի տես ցայ-
սօր ջսած՝ և չտեսած նման դատավարութեան, նոր գա-

դափարների քարոզման և մանաւանդ ազատ ու համար-
ձակ խօսքերի, մի քանի ժամւայ ընթացքում կատարե-
լապէս փոխել էր, նա՝ այժմ, փոխանակ արգահատանքի
և ատելութեան, ափսոսում և ոգեւորւում էր։
Խորհրդական սենեակում նոյնպէս տեղի էր ունե-
նում տաք և աղմկալի խօսակցութիւն։

— Յանցաւորների կարգ դատած այս մարդկանց
բերաններով խօսում է գիտութիւնը, անարատ ծմարտու-
թիւնը, մարդկային բարօրութեան և երջանկութեան
գիրագոյն գաղափարը։ Այս մարդիկ արժանի են հիաց-
ման և պաշտամունքի և ո՛չ թէ պատժի։ ասում էր
ոգեւորւած և յուզւած նախագահը, բայց որովհետեւ
Սուլթան Համբէկեան կառավարութիւնը, նրա օրինա-
գիրքը պահանջում են դատել ու պատժել ամենախիստ
կերպով, և ես եթէ յանդդնիմ հակառակը, այսինքն
համաձայն արդարութեան շարժւիլ, ինձ պիտի պատժեն
չարաչար կերպով, ես իմ համոզմունքներիս և ցանկու-
կութեանս հակառակ պիտի ստորագրեմ այսօրւայ տալիք
վճռին և այդ թերեւս լինի վերջնու։

Այս պէս անցկացաւ աւելի քան մէկ ժամ։

Վճռագիրները արդէն պատրաստ էին և դատաւոր-
ները առանց դժուարութեան շարժում էին գրիչները եւ
ստորագրում։

Հերթը նախագահին էր, նա վերջինին ստորագրելիս
բուռն զայրոյթով գրիչը կոտրեց սեղանին զարնելով եւ
ասաց։

— Զարդիշուր եմ անում մահապատիժներ վաւերա-
ցնող այս գրիչը, կախաղանների չւանները հիւսող այս

պողպատի կտոր-ծայրը եւ մնաս բարեւ ասում այս դահ-
ճի պաշտօնին :

Դատաւարները եւ զարմանում էին եւ մինչեւ ան-
գում ծիծաղում նախադահի խենթ միամտութեանը :

Վերջապէս դատաստանական կազմը վերադարձա-
դահիճ, ամնքը իրենց տեղերը բռնեցին, հանդիսա-
կանները թաղւեցին խորին լուսթեան մէջ. շատերը սր-
տատրոփ սպասում էին :

Վճռագիրների ընթերցումը սկսեց :

Ներկայացուցիչ Փարօ և խմբապետ Մելքոն դատա-
պարտում են մահւան պատժի, կախաղանի միջոցով . . .
երևանցի Արշակ, Պարսկաստանցի Վարդան Նազարբէգ-
եան, Մշեցի Վարդան, Խլաթցի Ենգօ, Կարճկանցի
Գիւրջի և Արճակեցի Գէորգ՝ տասնեւհինգական տարի
շղթայակապ տաժանակեր աշխատանքի . . .

Մահասփիւռ մի սարսուռ հով-քամի անցաւ բոլոր
ներկաների վրայով : Ընթերցման յաջորդեց մի պահ խորին
լուսթիւն . . . :

Կրկին ոտքի ելաւ Փարօն և ատաց .

Կաղախան և շղթայ, մահ և տաժանակ . . .
արհամարհում ենք, արհամարհում ենք մեր բոլոր էու-
թեամբ, մեր կարողութեամբ : Զեր կախաղանների սիւ-
ները՝ ազատութեան աշտարակներն են, և նրանց չւան-
ներից կախած ճոճուն մարմնները, յաւիտենական նա-
խատինք ներկայ կարգերի և նրանց հեղինակների համար :

Յեղափոխականի վերջին խօսքերի հնչիւնները խառ-
նըւեցին շարժւել սկսող շղթաների ձայնին :

Եւ նրանց կրկին բանտ տարան . . . :

1909 Յունաւար
Բարու



ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՑՈՒՆ
Օ. ԱՐՁՈՒՄՅԱՆ

№ 28

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԵՆ՝ ԱՍՕ-Ի

	Դր.
1. Հաւուէ Բ. ափալ. (ավատկերազարդ)	1.50
2. Կորովիր Օբեր (ազառւած)	6.—

ԲՈՅԱԼՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳԹՈՒԹԻՒՆԻ ՀԵՏԵԽԵԼԱՆԵՐԻ

1. Դաստիարակություն
2. Վահե (ավատկերազարդ)
3. Եօթն ճոպի (ազէման, ավատկերազարդ)
4. Դիցազգայունին (Ռուս. յիշ. կհանքից)
5. Ընկերունին (Հայ. յիշ. կհանքից)

Արտաց բաժնեզինն է 10 դրուշ

Այս բաժնեզինների համար զբարերի վրայ նշանակուած գներով :

Հեղինակի հասցեն է՝

1. Պոլիս, Զաքարյան քարտը թիւ 25
2. Գլուխձելել գրԱՏԱԽԵ — 0.00-ին

ԹԻՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻՆ

1. Կորովիր Զրուանը
2. Մամիկոն
3. Մըս
4. Աղօթքը



NL0322920

ՀՀ Ազգային գրադարան

20.561